

ԳԻՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ,

ԱՐԿԻՏԵԿՏԱՐԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

**Նակոր Մանանդյան, Երկեր, հատոր Է, Բանասիրական
ուսումնասիրություններ, Երևան, ԵՊՀ հրապարակչություն, 2010:**

Նակոր Մանանդյանը Ի դարի հայ պարմագիտության ամենաերևելի դեմքերից է: 1921 թ. հունվարին նա ընդգրկվել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր, 1939 թ.՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 1943 թ. եղել է Նայասարանի ԳԱ հիմնադիր անդամներից մեկը: Մանանդյան գիտնականի անունը մի շարք աշխատությունների շնորհիվ դուրս է եկել հայ պարմագիտության շրջանակներից և մտել համաշխարհային գիտության անդամարանը:

Նակոր Մանանդյանը հեղափոխությունների լայն շրջանակ ունեցող գիտնական է: Նրա շուրջ 150 աշխատությունները, որոնք լույս են տեսել հայերեն, ռուսերեն և գերմաներեն, վերաբերում են հայոց հին և միջնադարյան պարմությանը, պարմական աշխարհագրությանը, չափագիտությանը, բանասիրությանը, վիճակագրությանը և մշակույթին:

Ականավոր պարմաբանի ծննդյան 100-ամյակի առթիվ Խորհրդային Նայասարանի Գիտությունների ակադեմիայի պարմության ինստիտուտը ձեռնամուխ եղավ Ն. Մանանդյանի աշխատությունների ամբողջական հրապարակությանը: 1977-1985 թթ. լույս ընծայվեցին Ն. Մանանդյանի երկերի ժողովածուի վեց հատորները: Առաջինից երրորդ հատորներն ընդգրկում են հայ ժողովրդի քաղաքական պարմությանը նվիրված հիմնարար աշխատությունները՝ «Քննական տեսություն հայ ժողովրդի պարմության», «Տիգրան Բ և Նոմր» և մի քանի փոքրածավալ ուսումնասիրություններ: Չորրորդ հատորում գեղեցիկապես և ավարտաբերության դարաշրջանի Նայասարանի լուսաբանմանը նվիրված հեղափոխությունները: Նայասարանի պարմական աշխարհագրության և տեղագրության հարցերին վերաբերող ուսումնասիրություններն ամփոփված են երկերի հինգերորդ հատորում: Մեծանուն գիտնականի երկերի վեցերորդ հատորը (1985 թ.) ամփոփում է հին և միջնադարյան Նայասարանի քաղաքների և առևտրի պարմությանը, չափերին ու կշիռներին նվիրված ուսումնասիրությունները:

Նենց այս հատորով էլ սահմանափակվեց ութհատորյակի հրապարակությունը, և, դժբախտաբար, գիտական հանրությանը չմատուցվեցին Ն. Մանանդյանի բանասիրական ուսումնասիրությունները:

Վերջինը դարձավ հատորի լույսընծայումից անցան փառքներ: Նասարակական-քաղաքական բոլոր իրադարձությունները, Ղարաբաղյան պարերազմը, գիտական կյանքի նվաղումը մեծապես ազդեցին Նայասարանի գիտության շար ու շար ոլորտների վրա՝ երբեմն կաթվածահար անելով դրանք: Ն. Մանանդյանի երկերի ժողովածուն կարծես մոռացության էր մատնվել:

Եւ ահա ուրախալի փաստ: Նայագեղների ուշադրությանն է հանձնվում ականավոր գիտնականի երկերի յոթերորդ հատորը, որն ունի «Բանասիրական ուսումնասիրություններ» խորագիրը: Նրա արարականությունն իրականացրել է Երեւանի պետական համալսարանի հրապարակչությունը՝ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության (Լիսաբոն) Նայկական բաժանմունքի հոգաժողովար (սնորեն դոկտոր Զ. Եկավյան):

Ն. Մանանդյանի երկերի այս հատորը հրապարակության է պարգևատրել ԵՊՏ եւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս, պարմաբան Պետրոս Նովհաննիսյանը: Ասենք, որ Պ. Նովհաննիսյանը վերջին տարիներին լծվել է խիստ օգտակար մի աշխատանքի. իրականացնում է հայագիտության մեկ այլ հսկայի՝ Ն. Ադոնցի երկերի ժողովածուի հրապարակությունը (կրկին Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ): Մեկը մյուսի հետեւից գիտական հասարակայնությանն են մատուցվում Ն. Ադոնցի երկերի՝ խնամքով պարարտված հատորները: Գնահատելի եւ անշուշտ շնորհակալ աշխատանք:

Ն. Մանանդյանի երկերի յոթերորդ հատորի խմբագրական հանձնաժողովը (Պ. Ն. Նովհաննիսյան, Ա. Գ. Մադոյան, Ա. Ա. Մելքոնյան, Պ. Գ. Ստեփանյան) մուտքի խոսքում նշում է, որ հատորն ընդգրկում է հայագետի բանասիրական հիմնական ուսումնասիրությունները: Եւ քանի որ բանասիրական որոշ աշխատություններ չպարճառաբանված կերպով գեղեցիկ են եղել նախորդ հատորներում, դրանք, բնականաբար, կրկին լույս չափարի տեսնեն: Միանգամայն հասկանալի է, որ հատորում տեղ չափարի գրքերին նաեւ Ն. Մանանդյանի աշխատասիրած բնագրերի հրապարակությունները (Արիստոտել, Ներմես Եռամեծ, Թեոֆիլ Աղեքսանդրացի, Զենոն Ստոիկ եւ այլք):

Նայքնի իրողություն է, որ Գերմանիայում համալսարանական կրթություն եւ գիտական աստիճան ստացած Ն. Մանանդյանը որպէս գիտնական եւ մանկավարժ ձեռագրվել է Մուրբ Էջմիածնի Գեորգյան ճեմարանում աշխատելու շրջանում: 1899 թ. վերջին Ն. Մանանդյանն ընդունում է ճեմարանի տնօրէնության հրավերը եւ տեղափոխվում է Էջմիածին, որտեղ դպրոցական եւ լսարանական բաժիններում նշանակվում է հին հունարենի ուսուցիչ, ավելի ուշ դասավանդում է նաեւ գերմաներեն, հունական փիլիսոփայություն, գրականության պատմություն եւ այլն:¹

Գործունեության սկզբնական՝ էջմիածնական շրջանում Ն. Մանանդյանի գիտական աշխատանքները բանասիրական ուղղվածություն ունեին: Նա հիմնականում զբաղվում է հունարեն դպրոցի թարգմանությունների ուսումնասիրությամբ: Ճեմարանում աշխատել է հինգուկես տարի եւ այդ ընթացքում անընդհատ պրպրել է Մայր Աթոռի ձեռագրապանը, ծանոթացել բազմաթիվ գրագիր մարդկանց, շարադրել իր առաջին աշխատությունները, դրանք հրապարակել «Արարատ» ամսագրում:

Երկերի յոթերորդ հատորում են գտնվում 1904 թ. «Արարատի» տարբեր համարներում, այնուհետեւ առանձին լույս տեսած «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» մատենագրական հետազոտությունը:

Բանասիրական, լեզվաբանական եւ աղբյուրագիտական ծանրակշիռ հետազոտություն է «Նունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները» կոթողային աշխատությունը: Այն 1925-1928 թթ. առանձին հոդվածների ձեւով Վիեննայում նախ լույս է տեսել «Նախնա ամսօրյա»

1 Պ. Նովհաննիսյան, Նախորդ Մանանդյան. «Նշանավոր ճեմարանականներ», պրակ Ա, Ս. Էջմիածին, 2005, էջ 359-364:

ամսագրի մի շարք համարներում, իսկ 1928 թ.՝ առանձին գրքով և այսօր հազվագյուտ հրապարակություն է:

Եւ ահա «Նունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» մեծարժեք աշխատությունը զեպտեղված է ներկա հատորում՝ հուրախություն հայագետների:

Գրախոսվող հատորում զեպտեղվել են նաև «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատությունը (անշուշտ, Խորենացու ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ Մանանդյանի փեսակներին այսօր ընդունելի չեն հայագիտության մեջ), ինչպես նաև «Նոր դիպողություններ Մովսես Խորենացու պարմության բառապաշարի մասին», «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ», «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական փաճարի կառուցման ժամանակը» ուսումնասիրությունները:

Ն. Մանանդյանի երկերի յոթերորդ հատորում ընդգրկվել են նաև թարգմանություններ: Ենայի համալսարանում ուսանելու փառիներին որպես դոկտորական ասպիրանտություն գրված և 1897 թ. պաշտպանված հեղափոխությունը գերմաներեն լույս է տեսել Լայպցիգում: «Ուսումնասիրություններ Մովսես Ուրեցու վերաբերյալ» վերնագրով աշխատությունը գերմաներենից թարգմանել է Ա. Նայրունին: Ռուսերենից թարգմանվել է «Մար-Աբասի «Նայոց նախնական պարմություն»-ը (Սեբեոսի, Մովսես Խորենացու և Պրոկոպիոս Կեսարացու աղբյուրների հարցի առթիվ)» հեղափոխությունը (թարգմանիչ՝ Գ. Մադոյան):

Ն. Մանանդյանի բանասիրական ուսումնասիրություններն ընդգրկող հատորն օժտված է փնտրելի և հարուստ անհրաժեշտ ցանկերով՝ անձնանունների և փնտրանունների (կազմող՝ Ա. Ուրուջյան), ինչպես նաև հրապարակված աշխատությունների վերաբերյալ մատենագիտական օգտակար ծանոթագրություններով (կապարել է Պ. Նովիանինյանը):

Ակադեմիկոս Ն. Ն. Մանանդյանի գիտական գործունեությունը հայրնի է հայ հասարակությանը, գրվել է նրա գիտական կենսագրությունը, անդրադարձ է եղել նրա գործունեության փառքեր փուլերին:² Ն. Մանանդյանի աշխատությունները, այդ թվում՝ երկերի յոթերորդ հատորում զեպտեղվածները, բազմիցս և հանգամանալից գրախոսվել են, բնության նյութ դարձել, գնահատվել, արժեւորվել: Ուսրի այդ մասին մենք խոսք չենք ասում:

Մեր համոզմամբ՝ հիշարժանը և ողջունելին անկապար մնացած կարևոր մի ձեռնարկումի՝ Նակոբ Մանանդյանի երկերի հրապարակության ամբողջացումն է, այդ գործի հաջող ավարտը: Մա ուշագրավ և միաժամանակ ուսանելի երևույթ է հայաստանյան գիտական կյանքում:

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

2 Լ. Ն. Բաբայան, Վ. Ա. Նակոբյան, Նակոբ Մանանդյան, Եր., 1974: Պ. Ն. Նովիանինյան, Նակոբ Մանանդյան (կենսամատենագիտություն), Երևան, 1981: Պ. Նովիանինյան, Նակոբ Մանանդյանը Գեորգյան ճեմարանում, «Էջմիածին», 2004, Է-Ը: